


# ՈՒՍԱՆՈՂ ՎԱՐԴԱՊԵՏԸ

*Posted on May 25, 2021 by Keghart*



Category: [Opinions](#)



## Հայր Յարութիւն Վրդ. Պզտիկեանի Յիշատակին

*Յարութիւն Վրդ. Պզտիկեան այն հայ հոգեւորականներէն է, որոնք Ս. Խաչի կողքին բարձր բռնած են Հայկեան նետն ու աղեղը եւ Սասնայ Ծռերու Թուր Կայծակին, Աւետարանին հետ Խորենացիի «Պատմութիւն Հայոց»ն ու Եղիշէի «Վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին» մատեանները: Արդարեւ, ան իր ամբողջ գործունէութեան ընթացքին իր սաները դաստիարակեց Խրիմեան Հայրիկի «Երկաթէ շերեփ»ի ոգիով եւ եղաւ հայ Լորագոյն գինեալ պայքարի գաղափարական հայրերէն մէկն ու օրհներգուն: (Խմբ.)*

**Եսայի Հաւաթեան**, Մուսա Լեռ-Այնճար, ([Էրեբունի լրատուական ցանց](#)), 29 Ապրիլ 2021

Մուսա Լեռ-Այնճար կատարած իր վերջին այցելութեան ընթացքին վարդապետը խնդրեց, որ շրջինք նաեւ Այնճարի պարտեզներուն մէջ: Տեսնելով աչ ու ձախ խնամուած պտուղի պարտեզները՝ ուրախացաւ եւ հպարտացաւ: Նաեւ ըրաւ սրտցաւ խոստովանութիւն մը՝ յայտնելով. «Շատ լաւ պիտի ըլլայ, եթէ ամրան արծակուրդները անցնեն իմ հարազատ գիւղիս եւ ժողովուրդիս մէջ»: Մեկնելէ առաջ հրաշալի գեղանկար մը նուիրեց Այնճարի «Ս. Չէյթեան» կեդրոնին: Մեկնեցաւ դարձեալ վերադառնալու խոստովանով:

Վարդապետը ժառանգորդն էր Մուսա Լեռան հերոսամարտի քաջարի նահատակներէն Յովհաննէս Գուճանեանի (Ֆենտ), որ լեռան վրայ շարունակած էր կռուիլ մինչեւ պաշարուիլը եւ իր որսի գէնքով (*գըրմա թէք*) սպաննած էր հինգ թուրք զինուորներ: Վարդապետին երակներուն մէջ կը հոսէր այդ հերոսներուն արիւնը՝ ազգին եւ հայրենիքին համար միշտ պատրաստ ըլլալու վճռակամութեամբ:

Այդ այցելութեան ընթացքին արդէն գաւազանով սկսած էր քալել: Ըսաւ՝ երկաթ դրած են ողնայարին երկու կողմերը: Հետագային իմացայ, որ երբ հայկական եկեղեցիներ կ'այցելէր, վանքի մը տանիքէն ինկած էր եւ վնասուած էր ողնայարը: Միայն բժշկական բարդ գործողութեան մը որպէս արդիւնք՝ չէր անդամալուծուած:

Դժբախտաբար, սակայն, վերջին տարիներուն չկրցաւ գալ դարձեալ եւ այժմ արդէն վերջնականապէս բաժնուած է այս աշխարհէն ու մեկնած՝ հանգչելու իր այնքան սիրած Ս. Ղազար կղզիին մէջ:

Վարդապետին հետ ծանօթութիւնս կ'երթայ մինչեւ 1980-ականներու երկրորդ կէտը, երբ առաջին անգամ առիթ ունեցանք Համագայիի «Պ. Սեւակ» մասնաճիւղի յարկին տակ կազմակերպելու իր առաջին նկարչական ցուցահանդէսը Այնճարի մէջ: Աւելի մօտէն ծանօթացանք վարդապետին, եւ մեր կապը դարձաւ մնայուն ու ջերմ:

Վարդապետը հիացուց մեզ: Ան ոչ միայն մեծ հոգեւորական էր, հայագետ, գրաբարագետ, նկարիչ, կրթական մշակ, քաջ մուսալեռցի, այլեւ՝ շատ մեծ հայ, որ

**Կ'ապրէր իր ժողովուրդին հոգերով եւ հայրենիքով:**

Վարդապետը ստացած էր բարձր կրթութիւն՝ դոկտոր աստուածաբանութեան, փիլիսոփայութեան եւ արուեստի պատմութեան մէջ եւ յաջողած էր դառնալ հանրաճանաչ նկարիչ (վկայուած՝ Վենետիկի ակադեմիայէն) իր իւրայատուկ ապակիի փոշի ներկերով եւ Եւրոպայի տարածքին ու ամէլի հեռուները զինք կը ճանչնային որպէս արդի նկարչութեան ամէնէն օժտուածներէն: Ստեղծած էր իր գերիրապաշտ ոճը եւ՝ միջազգային գնահատանքի արժանացած: Փիքասոն կազմակերպած էր իր առաջին ցուցահանդէսը: Արժանացած էր բազմաթիւ մրցանակներու եւ գնահատականներու:

Վարդապետը, սակայն, չէր սահմանափակուած միայն նկարչութեամբ եւ հոգեւոր կեանքով, այլ ան բեղուն գրող էր եւ իր հրատարակած հատորները կը հասնին շուրջ 43-ի՝ հայերէն եւ օտար լեզուներով:

Վարդապետը նաեւ պաշտպանն էր հայ ճարտարապետութեան: Այցելելով տարբեր շրջաններ գտնուող մեր վանքերն ու եկեղեցիները՝ հանրութեան կը ներկայացներ մեր ճարտարապետական հարստութիւնը առանձին գիրքերով: Այս աշխատանքին մէջ շատ մեծ է իր ներդրումը եւ՝ մնայուն: Մանաւանդ իրեն կը պարտինք Սեւ ծովի մերձափնեայ շրջաններուն մէջ գտնուող հայկական վանքերու եւ եկեղեցիներու «բացայայտում»-ը:

Սերունդներ դաստիարակած ուսուցիչ-տնօրէն էր վարդապետը, եւ շնորհիւ ատոր ունէր լայն ծանօթութեան շրջանակ եւ դարձած էր բոլորի սրտին սիրելի վարդապետը:

Գործած էր թե՛ Միջին Արեւելքի, թե՛ Եւրոպայի եւ թե՛ Ամերիկայի հայկական գաղութներուն մէջ: Եղած էր Հալէպի Մխիթարեան վարժարանի տնօրէն երկար տարիներ եւ՝ սերունդներ դաստիարակած:

Դարձած էր Մխիթարեան միաբանութեան ամէնէն գործունեայ եւ հաւատաւոր անդամը, որուն աշխատանքային ծիրը շատոնց անցած էր միաբանութեան սահմանները:

Յարութիւն Պզտիկեանը դարձած էր հայկական մշակոյթի արթուն պահակը եւ իր աշխուժ աշխատանքներով սիրուած՝ յատկապէս երիտասարդներուն կողմէ:

Վերջին տարիներուն ան տէրն ու տնօրէնն էր իր ամէնէն սիրած Փարիզի Մուրատ Ռաֆայելեան վարժարանին եւ ծրագրած էր այս վարժարանը վերածել Եւրոպայի հայկական մշակութային կեդրոնի: Պէտք էր տեսնել իր խանդավառութիւնը, երբ ցոյց կու տար մշակութային կեդրոնի քարտէսները, որոնք պատրաստուած էին մեծ բծախնդրութեամբ:

Մնաց միշտ արթուն եւ հայկական արժէքներու պաշտպան, չնահանջեց, նոյնիսկ երբ քանի մը անգամ յարձակում գործուեցաւ վարժարանին վրայ, որ դժբախտաբար չդատապարտուեցաւ ըստ արժանւոյն:

Արցախեան վերջին պատերազմը սարսափելիօրէն ազդեց իր հոգիին վրայ:

Չհաշտուեցաւ մեր կորուստներուն հետ, բողբոջ, դժգոհեցաւ եւ դժբախտաբար  
հոգեպէս անելի ընկճուեցաւ: Դիմատետրի վրայ ամէն օր ըսելիք ուներ: Կը ներկայացներ  
մէջբերումներ եւ աղօթքներ:

Հակառակ այս բոլորին, սակայն, մնաց իր սիրած վարժարանին մէջ որպէս տնօրէն՝  
մինչեւ իր կեանքին վերջին վայրկեանը:

Վարդապետը մնաց պատնէշի վրայ, մահացաւ աշխատանքի սեղանին վրայ:

Ա՛խ վարդապետ, ա՛խ,

Վա՛խ վարդապետ, վա՛խ,

**There are no comments yet.**